ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների խորհրդակցությանը մասնակցելու նպատակով Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը՝**

Անահիտ Գալստյան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի կենսաթոշակային ապահովության վարչության պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2018 թվականի օգոստոսի 15-ից 17-ը

3. **Հրավիրող կողմը՝**

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

4. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների խորհրդակցությանը

5. **Քննարկված թեմաները**

1) «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատավորների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրի նախագիծը (այսուհետ՝ Համաձայնագրի նախագիծ),

2) «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատավորների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրի կիրառման կարգի նախագիծ (այսուհետ՝ Կարգի նախագիծ)

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Օգոստոսի 15-16-ը կայացած խորհրդակցություններում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքային միգրացիայի և սոցիալական պաշտպանության վարչության մասնագետների, ԵՏՄ անդամ պետությունների կենսաթոշակային ապահովության բնագավառում լիազոր, իրավասու մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկվել են Համաձայնագրի և Կարգի նախագծերը, իսկ օգոստոսի 17-ին՝ միայն Կարգի նախագիծը: Խորհրդակցությունները

վարում էր Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքային միգրացիայի և սոցիալական պաշտպանության վարչության պետ Պ. Ու. Սույունբաևան:

Օգոստոսի 15-ին հանձնաժողովի տնտեսական և ֆինանսական քաղաքականության գծով կոլեգիայի անդամ (նախարար) Տ. Մ Ժակսիլիկովի նախագահությամբ խորհրդակցություն՝ Համաձայանգրի նախագծի՝ ներպետական համաձայնեցման գործընթացի արդյունքների և Կարգի նախագծի վերաբերյալ:

Համաձայնագրի նախագծի՝ ներպետական համաձայնեցման գործընթացի արդյունքները ներկայացրել էին Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի Հանրապետությունները: Մենք պարզաբանեցինք, որ ՀՀ օրենսդրությամբ ներպետական համաձայնեցման գործընթացի ժամկետներն ավելի երկար են, քան հատկացված էր, ուստի շահագրգիռ մարմինները դեռևս չեն ներկայացրել իրենց կարծիքները Համաձայնագրի նախագծի վերաբերյալ:

Համաձայնագրի նախագծի վերաբերյալ ներպետական համաձայնեցման արդյունքներում Ղրղզստանի Հանրապետության և Հանձնաժողովի իրավաբանական դեպարտամենտի ներկայացրած առաջարկությունները հաշվի առնելով որոշվեց Համաձայնագրի նախագծից հանել 2-րդ հոդվածի 3-րդ կետը, որով նախատեսվում էր կարգավորել սոցիալական կենսաթոշակներին/նպաստներին առնչվող հարաբերությունները (այլ պետությունից կենսաթոշակ ստանալու դեպքում սոցիալական կենսաթոշակը/նպաստը նշանակել նպաստ – կենսաթոշակ տարբերության չափով): Առաջարկությունը հիմնավորվում էր այն փաստով, որ դրույթը վերաբերում է Համաձայնագրի կարգավորման առարկան չհանդիսացող նպաստներին:

Հարկ է նշել, որ խնդրո առարկա դրույթի վերաբերյալ բազմիցս իր անհամաձայնությունն էր հայտնել նաև հայկական կողմը, քանի որ այն հակասում էր «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքին, որի համաձայն՝ մասնակիցը կարող է տնօրինել իր կուտակային կենսաթոշակը՝ անկախ պետական կենսաթոշակ, նպաստ ստանալու փաստից:

Համաձայնագրի նախագծի 10-րդ հոդվածի 7-րդ կետի ներպետական համաձայնեցման արդյունքներում Ղազախստանի Հանրապետության և Հանձնաժողովի իրավաբանական դեպարտամենտի ներկայացրած խմբագրական բնույթի առաջարկություններին կողմերը չհամաձայնեցին:

Ըստ Համաձայնագրի նախագծի՝ ներպետական համաձայնեցման ուղարկված տարբերակի 10-րդ հոդվածի 7-րդ կետի՝ Համաձայնագրի կիրարկումը պետք է ապահովվի Համաձայնագրի կիրարկումն ապահովող՝ Եվրասիական տնտեսական Հանձնաժողովի Խորհրդի հաստատած կարգով: Մինչդեռ առաջարկվում է այն հաստատել ԵՏՄ անդամ պետությունների լիազոր, իրավասու մարմինների և Եվրասիական տնտեսական Հանձնաժողովի միջև փոխհամագործակցության կարգով:

Ըստ էության խնդիրը Համաձայնագրի կիրարկումն ապահովող Կարգի անվանում է՝ այն կոչվի կիրարկման կարգ, թե՝ փոխհամագործակցության կարգ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կիրարկման կարգն ըստ էության ավելի լայն ընդգրկում ունի բովանդակային առումով այն ավելին է, քան պարզ

համագործակցությանն (փաստաթղթերի, տվյալների ընդունմանը, ուղարկմանը, կողմերի միջև տեղեկատվության փոխանակմանը) առնչվող հարաբերությունների կարգավորումը, կողմերը հայտնեցին իրենց մտահոգությունն այն առումով, որ որպես փոխհամագործակցության կարգ սահմանվելու դեպքում հետագայում կարող են խնդիրներ ծագել դրա կարգավորման առարկայի ընդգրկման հարցի շուրջ:

Որոշվեց, որ առաջարկության հեղինակները մեկ անգամ ևս քննարկեն իրենց մոտեցումը:

Միաժամանակ արձանագրվեց, որ հայկական կողմից բացի, բոլոր կողմերը համաձայն են Համաձայնագրի 7-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված՝ ՌԴ-ում գումարային աշխատանքային ստաժով (երբ ՌԴ տարածքում ձեռք բերված աշխատանքային ստաժը բավարար չէ կենսաթոշակի իրավունքը որոշելու համար հաշվի է առնվում նաև ԵՏՄ այլ անդամ պետությունների տարածքներում ձեռք բերված աշխատանքային ստաժը) կենսաթոշակի իրավունքը որոշելիս ԵՏՄ այլ անդամ պետությունների տարածքներում ձեռք բերված աշխատանքային ստաժի յուրաքանչյուր տարվա համար ИПК-ն սահմանել 1[1]:

Որոշվեց հարցը քննարկել օգոստոսի 22-ին Հայաստանի Հանրապետությունում կայանալիք՝ հանձնաժողովի տնտեսական և ֆինանսական քաղաքականության գծով կոլեգիայի անդամ (նախարար) Տ. Մ Ժակսիլիկովի և ՀՀ փոխվարչապետ Մ. Գրիգորյանի, ինչպես նաև ՀՀ կառավարության՝ սոցիալական բլոկի պատասխանատու պաշտոնատար անձանց հանդիպման ընթացքում:

Կարգի նախագծի քննարկման ժամանակ պարզ դարձավ, որ Համաձայնագրի՝ ներպետական համաձայնեցման ուղարկված նախագծում անխուսափելի է հետևյալ 2 փոփոխություններ կատարելը՝

1) խմբագրվելու է 10-րդ հոդվածի 6-րդ կետը (ավել վճարված կենսաթոշակի գումարն այլ անդամ պետության կողմից վճարվող կենսաթոշակի գումարից հետգանձումը հնարավոր է, եթե այդ կենսաթոշակի վճարումն ավել վճարած պետությունում դադարել է և չկա այդ գումարը հետ գանձելու այլ եկամուտ),

2) ավելացվելու է նոր դրույթ՝ համաձայնագրի շրջանակներում նշանակված կենսաթոշակի իրավունքը կենսաթոշակը վերահաշվարկելու դեպքում (այդ թվում՝ բնակության վայրը փոխելու հիմքով) չվերանայվելու վերաբերյալ:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ առաջարկությունները կներկայացնեն ներպետական համաձայնեցման արդյունքները դեռևս չներկայացրած՝ հայկական և ռուսական կողմերը:

Պարոն Տ. Մ Ժակսիլիկովը մեկ անգամ ևս անդրադարձավ Համաձայնագիրը և Կարգը 2019 թվականից կիրառելու նպատակով աշխատանքներն արագացնելու խնդրին: Միաժամանակ կարևորեց կենսաթոշակային ապահովության բնագավառում լիազոր, իրավասու մարմինների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջև

---

[1] ՌԴ օրենսդրությամբ տարիքային պահանջից բացի, կենսաթոշակի իրավունք տվող պայմաններն են՝ 15 տարվա աշխատանքային ստաժ (2024 թ.-ից) և 30 անհատական կենսաթոշակային գործակից՝ ИПК (2025 թ.-ից), որի հաշվարկման հիմքում դրված են հաշվարկված և ՌԴ կենսաթոշակային համակարգ վճարված ապահովագրական վճարները:

էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման գործընթացն ապահովող ԵՏՄ ինտեգրված տեղեկատվական համակարգի ծրագրային գործիքը մշակելու և կիրառելու աշխատանքները ևս հնարավոր սեղմ ժամկետներում իրականացնելու հարցին: Խնդիրը Համաձայնագրի կիրառման շրջանակներում յուրաքանչյուր անդամ պետությունում մեկ մարմնի միջոցով տեղեկատվության փոխանակման գործընթացի կազմակերպումն ու իրականացումն է:

Խորհրդակցություններում Կարգի նախագիծը քննարկվել է հոդված առ հոդված՝ և՝ բովանդակային, և՝ ձևակերպումների առումներով:

Քննարկման արդյունքում որոշվեց՝

1) Համաձայնագրի նախագծին անդրադառնալ Հայաստանի Հանրապետությունից և Ռուսաստանի Դաշնությունից ներպետական համաձայնության գործընթացի արդյունքներով ստացված առաջարկությունների հիման վրա,

2) ներկայացված առաջարկությունների, համաձայնեցված մոտեցումների հիման վրա խորհրդակցության արձանագրությամբ սահմանված ժամկետում հանձնաժողովը կլրամշակի կարգի նախագիծը և կարծիքի կուղարկի կողմերին, որոնք դրա վերաբերյալ իրենց դիրքորոշումը կներկայացնեն հանձնաժողովին:

7. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկությունները հանձնաժողով կներկայացվեն գրավոր՝ կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների խորհրդակցության արձանագրության համաձայն՝ նրանում նշված ժամկետներում:

8. Գործուղվողը

Անահիտ Զորիկի Գալստյան

9. Ստորագրությունը, ամսաթիվը